ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 492-Ա/2 **11 ապրիլի 2023թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ, ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅԱՆ (ԷՔՍԿՈՒՐՍԻԱ) ՏՈՄՍԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 368-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության թանգարանների, արգելոց-թանգարանների մշտական ցուցադրության այցելության տոմսերի սակագները՝ 1000-3000 ՀՀ դրամ:

2. Թանգարանի մշտական ցուցադրության բացատրության (էքսկուրսիա) տոմսերի գները՝ հայերեն և օտար լեզուներով, սահմանել 1000-5000 ՀՀ դրամ:

3. Թանգարաններում և արգելոց-թանգարաններում մշտական ցուցադրության այցելության տոմսերի գների ավելացման դեպքում նախօրոք այն համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ:

4. Սահմանել՝

1) անվճար մուտք մինչև 12 տարեկան երեխաների համար.

2) տոմսի գինը 50 տոկոս զեղչով՝ 12 տարեկանից բարձր դպրոցականների, ուսանողների, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներում մարտական գործողությունների ժամանակ ծառայողական

պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամների, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կենսաթոշակառուների, փախստականների համար:

5. Թույլատրել զբոսաշրջային և կորպորատիվ նպատակներով մեծաքանակ տոմսերի վաճառքի դեպքում մշտական այցելության տոմսերի գները նվազեցնել մինչև 10 տոկոսի չափով՝ նախապես զբոսաշրջային օպերատորների կամ գործակալների հետ կնքելով համապատասխան պայմանագրեր:

6. Սահմանել, որ թանգարանի մշտական ցուցադրության անվճար այցելություն տրամադրվում է Հայաստան ժամանած պետական պաշտոնական պատվիրակությունների անդամների, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների, Թանգարանների միջազգային խորհրդի անդամների (ԻԿՕՄ), թանգարանային աշխատողների, երկկողմանի ծնողազուրկ 12 տարեկանից բարձր տարիքի երեխաների, հատուկ խնամքի և կենցաղային սպասարկման կարիք ունեցող ծերերի, Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցների (Հայաստանի Հանրապետության և նախկին ԽՍՀՄ պետությունների), հաշմանդամություն ունեցող՝ 1-ին խմբի (ուղեկցողի հետ), հաշմանդամություն ունեցող՝ 2-րդ և 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի), աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված նպաստառուների, բազմազավակ ընտանիքների 12 տարեկանից բարձր երեխաների, ժամկետային զինծառայողների, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների 12 տարեկանից բարձր դպրոցական տարիքի երեխաների (նախօրոք ներկայացված հայտերի հիման վրա), լրագրողների՝ աշխատանքային բոլոր օրերին (անձը և կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում):

7. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը մուտքն ազատ է:

8. Սահմանել, որ թանգարանների, արգելոց-թանգարանների մշտական ցուցադրության այցելության տոմսերն ուժի մեջ են մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 30-ը ժամը 24:00:

9. Թանգարանների և արգելոց-թանգարանների մշտական ցուցադրությունում մասնագիտական լուսանկարման և տեսագրման թույլտվությունը վերապահել միայն թանգարանի տնօրինությանը՝ համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ:

10. Թանգարաններում և արգելոց-թանգարաններում կրթական ծրագրերի սակագները սահմանել 1000-5000 ՀՀ դրամի սահմաններում, իսկ լրացուցիչ ծախսեր պահանջող կրթական ծրագրերի գների ավելացման դեպքում նախօրոք այն համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ:

11. . Սահմանել, որ մինչև 2023 թվականի մայիսի 1-ը ձեռքբերված տոմսերը ուժի մեջ են մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ժամը 24:00:

12. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության թանգարանների մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիայի) տոմսերի գների և արտոնությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2009 թվականի օգոստոսի 3-ի N 458-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 368-Ա հրամանը:

13. Սույն հրամանի կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետի վրա:

14. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**